ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԱՊՐԻԼ 2026

ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության հարթակի 8-րդ հանդիպում

Երկաթի գործարանը ահաբեկում է աշխատողներին. նրանք կդիմեն Գերմանիայի մետալուրգներին

Ապրիլի 28-ը՝ աշխատանքի անվտանգության և առողջության համաշխարհային օր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ողջույնի խոսք
- Պետական ապարատի աշխատողների վարձատրության վերաբերյալ
- ՀԱՄԿ-ի իրազեկման արշավը Վանաձորում
- Մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Էսմա Սիմոնյանի հանդիպումը Արմավիրի մարզային գրադարանի աշխատողների հետ
- Քննարկում արհմիութենական կազմակերպությունների նախագահների հետ
- «Թատրոնի միջազգային օր» մասնագիտական տոնի առթիվ կազմակերպած միջոցառում
- Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի հանդիպումը ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի համանախագահի հետ
- ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության հարթակի 8-րդ հանդիպում
- Երկաթի գործարանը ահաբեկում է աշխատողներին. նրանք կդիմեն Գերմանիայի մետալուրգներին
- Անասնաբույժի օր
- Ապրիլի 28-ը՝ աշխատանքի անվտանգության և առողջության համաշխարհային օր
- Ապրիլի 28-ը՝ Աշխատանքի անվտանգության համաշխարհային օր. «Սուրճ ու սեր առավոտից»
- Աշխատանքի անվտանգության համաշխարհային օրը՝ «Արժանապատիվ աշխատանք եվ անվտանգ միջավայր» առանցքում
- Ժամանակակից հանրային ծառայությունների խնդիրները քննարկվեցին Բեռլինում

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրն լուսաբանում և հանրահռչակում է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից կատարված աշխատանքները: Այս ամսագիրը դարձել է հարթակ, որտեղ ներկայացվում են արհմիութենական առօրյայի կարևոր իրադարձությունները, ծրագրերը և միջոցառումները, որոնք նպաստում են աշխատողների իրազեկմանն ու նրանց աշխատանքային, սոցիալական, տնտեսական և մասնագիտական իրավունքների պաշտպանությանը:

Այսօր, ավելի քան երբևէ, տեղեկացված լինելը կարևոր է, և մենք շարունակում ենք մեր գործն՝ ամրապնդելով արհմիութենական շարժումը Հայաստանում և տարածելով տեղեկատվություն:

ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Պետական ապարատի աշխատողների վարձատրության քաղաքականության վերաբերյալ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել էր, որ նախատեսվում է հանրային ծառայողների վարձատրության և սոցիալական երաշխիքների համակարգի վերանայում

Հայաստանի պետհիմնարկների / Apr 20

ՀԱՄԿ-Ի ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՐՇԱՎԸ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) իրազեկման արշավի հերթական հանդիպումը տեղի է ունեցել Վանաձոր քաղաքում:
Հանդիպման ընթացքում քննարկվել են աշխատանքային և սոցիալական իրավունքների ոլորտի արդիական և մտահոգիչ հարցեր, ներկայացվել են աշխատողների իրավունքների պաշտպանության մեխանիզմներն ու արհմիությունների դերը դրանց ապահովման գործում:
Միջոցառմանը մասնակցել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչը, ով ներկայացրել է ՀՀ Մարդու իրավունքների գրասենյակի գործունեությունը և պատասխանել է մասնակիցների հարցերին:
Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին նախաձեռնությանը միանալու և արդյունավետ համագործակցության համար:

https://www.facebook.com/reel/834599319673059

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԷՍՄԱ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հանդիպում Արմավիրի մարզային գրադարանի աշխատողների հետ

2026 թվականի ապրիլի 3-ին տեղի ունեցավ Հայաստանի մշակույթի աշխատողների ճյուղային արհմիության նախագահ Էսմա Սիմոնյանի հանդիպումը Արմավիրի մարզային գրադարանի տնօրին...

hamk.am

Քննարկում արիմիութենական կազմակերպությունների նախագահների հետ

Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիայի նախագահի մասնակցությամբ տեղի ունեցավ հանդիպում արիմիութենական կազմակերպությունների նախագահների հետ, որի ընթացքում քննարկվեցին կոլեկտիվ բանակցությունների իրականացման արդյունավետության բարձրացման հնարավորությունները և ոլորտում առկա մարտահրավերները:

Հանդիպման ընթացքում մասնակիցները ներկայացրին իրենց կազմակերպությունների փորձը, անդրադարձան աշխատավայրերում ծագող խնդիրներին և կոլեկտիվ պայմանագրերի կիրառման գործնական հարցերին: Քննարկվեցին նաև սոցիալական երկխոսության զարգացման, աշխատողների իրավունքների պաշտպանության և արիմիությունների դերի ամրապնդմանն առնչվող հարցեր:

Մասնակիցները Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիայի նախագահի հետ փոխանակեցին կարծիքներ, ներկայացրին տեղերում առկա խնդիրներն ու մարտահրավերները և քննարկեցին դրանց լուծման հնարավոր ուղիները: Հանդիպումը ևս մեկ հնարավորություն էր համատեղ ջանքերով նպաստելու արիմիութենական շարժման զարգացմանը և կոլեկտիվ բանակցությունների արդյունավետության բարձրացմանը:

https://www.facebook.com/reel/1654147222271952

«ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ»

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Հայաստանի մշակույթի աշխատողների ճյուղային արհմիության “Թատրոնի միջազգային օր” մասնագիտական տոնի առթի

Օրերս Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը ՀԱՄԿ-ի 808-րդ սրահում հերթական անգամ նշեց “Թատր..

hamk.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՔԱՂՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության հարթակի 8-րդ հանդիպումից առաջ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) նախագահ Էլեն Մանասերյանը հանդիպել է Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի անդամ, ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի համանախագահ Դումիտրու Ֆորնեայի հետ։

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում սոցիալական երկխոսության զարգացման, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների, հատկապես հանքարդյունաբերության ոլորտում առկա մարտահրավերների, ինչպես նաև հարթակային աշխատողների սոցիալական իրավունքների պաշտպանության վերաբերյալ հարցերը։

Քննարկման ընթացքում անդրադարձ է կատարվել նվազագույն աշխատավարձի, սոցիալական արդարության, արժանապատիվ աշխատանքի և սոցիալական գործընկերության ամրապնդմանն առնչվող հարցերին։

Հանդիպման մասնակիցները վերահաստատել են իրենց հանձնառությունը՝ խթանելու սոցիալական երկխոսությունը, պաշտպանելու աշխատողների իրավունքները և նպաստելու Հայաստանում սոցիալական իրավունքների առաջխաղացմանը՝ եվրոպական չափանիշներին և միջազգային աշխատանքային սկզբունքներին համապատասխան։

ԵՄ-ՀԱՅԱՍՏԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԹԱԿԻ 8-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ապրիլի 15-ին Երևանում կայացավ ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության հարթակի 8-րդ հանդիպումը, որը միավորեց պետական մարմինների, արհմիությունների և գործատուների կազմակերպությունների, ինչպես նաև եվրոպական գործընկերների ներկայացուցիչներին:

Հանդիպման շրջանակում անցկացվեց «Արհմիությունների, գործատուների միությունների և կառավարության միջև սոցիալական գործընկերության դերը բարեփոխումների իրականացման ոլորտում» թեմայով պանելային քննարկում: Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց սոցիալական երկխոսության զարգացմանը, աշխատողների իրավունքների պաշտպանությանը և բարեփոխումների գործընթացում սոցիալական գործընկերների ակտիվ մասնակցության կարևորությանը:

https://www.youtube.com/watch?v=WYJesSKhKeg&t=7s

Բանախոսների թվում էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և էկոնոմիկայի նախարարությունների ներկայացուցիչները, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչները, ինչպես նաև Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի և եվրոպական աշխատողների կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հանդիպման ավարտին ընդունվեց ԵՄ-Հայաստան առաջիկա գագաթնաժողովին ուղղված Պլատֆորմի հռչակագիրը, որը ներառում է առաջարկություններ Հայաստան-ԵՄ համագործակցության, սոցիալական երկխոսության և սոցիալ-տնտեսական բարեփոխումների հետագա զարգացման վերաբերյալ:

ԵՐԿԱԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԱՀԱԲԵԿՈՒՄ Է ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ. ՆՐԱՆՔ ԿԴԻՄԵՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԵՏԱԼՈՒՐԳՆԵՐԻՆ

Երկաթի գործարանը ահաբեկում է աշխատողներին. նրանք կդիմեն Գերմանիայի մետալուրգներին

«Թող բացատրել իրենց սեփականատերերին, թե ինչ են նրանք անում այստեղ»

epress.am / Apr 19

ԱՆԱՍՆԱԲՈՒՅԺԻ ՕՐ

Ապրիլի 24-ին Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերական և անտառային համակարգերի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ներկայացուցիչները մասնակցել են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպված «Անասնաբույժը՝ առողջ հասարակության պահապան» միջոցառմանը:

Աղբյուր՝ **https://www.profagro.am/blog.html**

ԱՊՐԻԼԻ 28-Ը՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

Աշխատանքի միջազգային կազմակերպության նախաձեռնությամբ յուրաքանչյուր տարի ապրիլի 28-ը նշվում է որպես աշխատանքի անվտանգության և առողջության համաշխարհային օր, որի նպատակն է նպաստել աշխատավայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների կանխարգելմանը:
Աշխատանքի անվտանգության և առողջության 2026թ. համաշխարհային օրվա թեման է՝ «Եկեք ապահովենք առողջ հոգեսոցիալական աշխատանքային միջավայր»:
Այն ընդգծում է, որ աշխատավայրի հոգեսոցիալական միջավայրը ձևավորվում է աշխատանքի կազմակերպման, կառավարման և ամենօրյա աշխատանքային պայմանների միջոցով:
Այսօր ավելի ակնհայտ է դառնում, որ աշխատավայրում մարդու առողջությունը կախված է ոչ միայն ֆիզիկական պայմաններից, այլև աշխատանքային հարաբերություններից և կառավարման մշակույթից: Այն, թե ինչպես է կազմակերպվում աշխատանքը, որքան հստակ են սահմանված պարտականությունները, ինչպես է բաշխվում ծանրաբեռնվածությունը և ինչ մակարդակի աջակցություն է ստանում աշխատողը, ուղղակիորեն ազդում են նրա հոգեկան և ֆիզիկական վիճակի վրա:
Անբարենպաստ հոգեսոցիալական պայմանները կարող են առաջացնել լարվածություն, սթրես և աշխատունակության անկում: Եթե այդ գործոնները ժամանակին չեն գնահատվում և չեն կառավարվում, դրանք վերածվում են իրական ռիսկերի՝ ազդելով ինչպես աշխատողի առողջության, այնպես էլ կազմակերպության ընդհանուր արդյունավետության վրա: Այդ պատճառով կարևոր է, որ գործատուները հոգեսոցիալական ռիսկերի կառավարումը դիտարկեն որպես աշխատանքի անվտանգության համակարգի անբաժանելի մաս:
Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան կարևորում է այնպիսի աշխատանքային միջավայրի ձևավորումը, որտեղ ապահովված են արդար մոտեցումները և փոխադարձ հարգանքը: Միայն համակարգված և պատասխանատու մոտեցմամբ կարելի է ապահովել կայուն, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմաններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱ

ԱՊՐԻԼԻ 28-Ը՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ. «ՍՈՒՐՃ ՈՒ ՍԵՐ ԱՌԱՎՈՏԻՑ»

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը հյուրընկալվել է Հայաստանի հանրային ռադիոյի «Սուրճ ու սեր առավոտից» հաղորդմանը: Զրույցի ընթացքում ներկայացվել է Աշխատանքի անվտանգության և առողջության համաշխարհային օր **2026**-ի թեման՝ «Եկեք ապահովենք առողջ հոգեսոցիալական աշխատանքային միջավայր»: Կարևորվել է աշխատավայրում առողջ հոգեսոցիալական աշխատանքային միջավայրի ձևավորումը, առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովումն ու աշխատողների իրավունքների պաշտպանությունը:

https://www.youtube.com/watch?v=wUIdEhfIJLE

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԸ՝ «ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ՄԻՋԱՎԱՅՐ» ԱՌԱՆՑՔՈՒՄ

Ապրիլի 28-ին՝ Աշխատանքի անվտանգության համաշխարհային օրվա շրջանակում, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը կազմակերպել է «Արժանապատիվ աշխատանք և անվտանգ միջավայր» խորագրով միջոցառում: Այն համախմբել էր օրենսդիր և գործադիր իշխանությունների ներկայացուցիչներին, միջազգային կառույցների գործընկերներին, ինչպես նաև սոցիալական գործընկերներին:

Միջոցառմանը ելույթով հանդես է եկել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը (ելույթը կարելի է դիտել հետևյալ հղմամբ՝ **https://www.facebook.com/reel/1658219408631047**):

Միջոցառման երկրորդ հատվածում անցկացվել է պանելային քննարկում՝ «Արժանապատիվ աշխատանք և անվտանգ միջավայր. ժամանակակից մարտահրավերներ և լուծումներ» թեմայով

Բանախոսների կազմում էր նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը:

Քննարկման ընթացքում մասնակիցները կարևորել են աշխատանքի անվտանգության մշակույթի հետևողական զարգացումը, կանխարգելիչ մոտեցումների ներդրումը և սոցիալական գործընկերության խորացումը՝ որպես աշխատավայրերում անվտանգության մակարդակի բարձրացման առանցքային ուղղություններ:

Աղբյուր՝ **https://www.hlib.am/ashkhatanqianvtangutyanor/**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԲԵՌԼԻՆՈՒՄ

Ժամանակակից հանրային ծառայությունների խնդիրները քննարկվեցին Բեռլինում

Հայաստանի պետհիմնարկների / Jun 1

Հայաստանի արիմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3, Երևան, ՀՀ
Հեռ. ՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am